ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/244

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.08.2021թ. թիվ 26/26-1/13702-2021 գրությամբ «Լալունց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 20.08.2021թ. թիվ ՊՆ//4355-2021 գրության հիման վրա, 26.08.2021թ. թիվ 26/26-1/13702-2021 գրությամբ նախաձեռնել է «Լալունց» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լալունց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լալունց» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/244 ընթացակարգի շրջանակներում 01.09.2021թ. ժամը 09:25-ին և 06.09.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.08.2021թ. թիվ ՊՆ//4355-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/5» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Լալունց» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ հավելված 1.1-ում, 28-րդ և 30-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում են ապրանքների տեխնիկական բնութագրերը (ապրանքների ամբողջական նկարագրերը), նշված է միայն՝ համաձայն հրավերի պահանջների արտահայտությունը: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովն առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցն արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չի շտկել: Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը մերժել է «Լալունց» ՍՊԸ-ի հայտը:

Կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/244 ընթացակարգի շրջանակներում 01.09.2021թ. ժամը 09:25-ին և 06.09.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/244 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/244 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լալունց» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 17.08.2021թ. շարունակելով հայտերի գնահատման նիստը, արձանագրել է, որ «Լալունց» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացվել պահանջվող շտկումը: Շտկումը ներկայացվել է ժամկետի խախտմամբ, որը չի քննարկվել գնահատող հանձնաժողովի կողմից և որոշում է կայացվել մերժել վերջինիս հայտը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.08.2021թ. թիվ 26/26-1/13702-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.08.2021թ. թիվ ՊՆ//4355-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ ***հրավերով նախատեսվում է նաև, որ <u>մասնակիցը հայտով ներկայացնում է</u>՝ ապրանքների գնման դեպքում <u>իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը</u>***, իսկ հրավերով նախատեսված

դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լալունց» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.08.2021թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը. «Լալունց» ՍՊԸ-ի հավելված 1.1-ում, 28-րդ և 30-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում են ապրանքների տեխնիկական բնութագրերը (ապրանքների ամբողջական նկարագրերը), նշված է միայն՝ համաձայն հրավերի պահանջների արտահայտությունը: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին»:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով, իսկ հանձնաժողովի քարտուղարը 10.08.2021թ. armeps համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը և առաջարկել ներկայացնելու շտկված հավելված 1.1-ը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 17.08.2021թ. շարունակելով հայտերի գնահատման նիստը, արձանագրել է, որ «Լալունց» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացվել պահանջվող շտկումը: Շտկումը ներկայացվել է ժամկետի խախտմամբ, որը չի քննարկվել գնահատող հանձնաժողովի կողմից և որոշում է կայացվել մերժել վերջինիս հայտը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին կից ներկայացված հավելված 1-ը՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, 28-րդ և 30-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալ ձևով՝

Հ/h	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
28	մարզական հագուստ Համազգեստ մարզական երկարաթև	Մարզական կոստյում մարզումների և մրցումների համար, բաղկացած բաճկոնից և տաբատից (Regular Fit): Կտորի բաղադրությունը՝ 72% բամբակ, 22% պոլիէսթեր, 6% լայկրա: Առնվազն 240-250 գր մակերեսային խտությամբ: Բաճկոնի և տաբատի կողային գրպանները երևացող և հատուկ մշակված եղևնաձև ճարմանդով: Կրծքի ձախ վերին մասում ՀՀ զինանշան, 6.5 x 6.5սմ չափի: Բաճկոնի մեջքին սպիտակ գույնի լատիներեն մեծատառերով գրված ARMENIA: Տառերի բարձրությունը 6սմ: Բաճկոնի առաջամասի կրծքավանդակի լայնությամբ՝ 10-12սմ բացվածքով ապլիկացիա, տաբատի գույնի համադրությամբ: Տաբատը ուղիղ ձևածքով, գոտկամասը ներսից մշակված 3-4սմ լայնության էլաստիկ ժապավենով Տաբատի գոտկատեղի ռետինե ժապավենի երկայնքով անցկացված պարան:Տաբատի ձախ գրպանի հատվածում ՀՀ զինանշան, 6.5 x 6.5սմ: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Համազգեստի գունային գամման համաձայն հավելված 6-ի: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ +/- 5%: 35 հատ S, 40 հատ M, 40 հատ L, 35 հատ XL, 25 հատ XXL, 15 հատ XXXL, 10 հատ 4XL չափսերի: Չափսերի ստանդարտը համաձայն կից ներկայացված համազգեստ մարզական երկարաթև սանդղակի (հավելված 4): Համնազգեստի պիտակի վրա նշվում են «Արտադրված է ՀՀ ՊՆ պատվերով» գրառումը և չափսը: Արտադրող երկրի նշում առկա է միայն, եթե այն արտադրվել է Հայաստանում, այլ պարագայում արտադրող երկիրը չի նշվում: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 լրակազմ: Ստվարաթղթե արկղերի մեջ՝ արկղերի վրա նշված լինեն քանակը և չափսերը:
30	պոլո շապիկներ Օձիքով Շապիկ	Օձիքով պոլո շապիկ՝ մուգ կապույտ գույնի՝ համաձայն հավելված 7-ում տրված էսքիզի: Բաղադրությունը՝ 93% բամբակ, 7% լայկրա: Առավելագույնը 170գր մակերեսային խտությամբ: Օձիքը և թևերի եզրերը բամբակյա գործվածքով: Կոճակների քանակը՝ 3 կամ 4: Կրծքի ձախ վերին մասում՝ ՀՀ զինանշան, 6.5 x 6.5սմ: Շապիկի մեջքին սպիտակ գույնի լատիներեն մեծատառերով գրված ARMENIA: Տառերի բարձրությունը՝ 4սմ: Շապիկի պարանոցային մասի հետնասմասում կտորե հավելյալ ժապավենով (տիսմայով): Փաթեթավորումը պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը՝ +/- 5%: 25 հատ S, 45 հատ M, 50 հատ L, 35 հատ XL, 30 հատ XXL, 10 հատ XXXL, 5 հատ 4XL Չափսերի: Չափսերի ստանդարտը համաձայն հավելված 8-ում ներկայացված սանդղակի: Համազգեստի պիտակի վրա նշվում են «Արտադրված է ՀՀ ՊՆ պատվերով» գրառումը և չափսը: Արտադրող երկրի նշում առկա է միայն, եթե այն արտադրվել է Հայաստանում, այլ պարագայում արտադրող երկիրը չի նշվում: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով: Ստվարաթղթե արկղերի մեջ՝ արկղերի վրա նշված լինեն քանակը և չափսերը:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ «Լալունց» ՍՊԸ-ն հայտով Հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, 28-րդ և 30-րդ չափաբաժինների մասով ներկայացրել է հետևյալ ձևով՝

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը (2-րդ, 3-րդ, 5-րդ, 14-րդ, 15-րդ, 25-րդ և 34-րդ չափաբաժինների մասով)	ապրանքային նշանը (2-րդ, 3-րդ, 5-րդ, 14-րդ, 15-րդ, 25-րդ և 34-րդ չափաբաժինների մասով)	Մակնիշը (2-րդ, 3-րդ, 5-րդ, 14-րդ, 15-րդ, 25-րդ և 34-րդ չափաբաժինների մասով)	արտադրողի անվանումը (2-րդ, 3-րդ, 5-րդ, 14-րդ, 15-րդ, 25 դդ և 34-րդ չափաբաժինների մասով)	տեխնիկական բնութագրերը
28	lalunz	lalunz	-	«Լալունց» ՍՊԸ	Համաձայն հրավերի պահանջների
30	lalunz	lalunz	-	«Լալունց» ՍՊԸ	Համաձայն հրավերի պահանջների

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև <u>ներկայացված ապրանքի</u> ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:***

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերությամբ սահմանվում է, որ ***հրավերով նախատեսվում է նաև, որ <u>մասնակիցը հայտով ներկայացնում է</u>՝ ապրանքների գնման դեպքում <u>իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը</u>***, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է <u>իր կողմից առաջարկվող</u> ապրանքի տեխնիկական բնութագրերը***:

Ընդ որում Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը <u>մեկ աշխատանքային օրով</u> կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:</u>***

Այսպիսով՝ գործով առկա փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ծանուցվելով անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում չի ներկայացրել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված N 1.1) շտկված տարբերակը, որն էլ իր հերթին հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է

բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը՝ համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ «Լալունց» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.08.2021թ. թիվ 26/26-1/13702-2021 գրությամբ «Լալունց» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Լալունց» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**